ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Ֆասթ Բանկ» ՓԲԸ
Տնօրինության 31.05.2024թ.-ի
թիվ DEC 12-33 արձանագրությամբ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

«ՖԱՍԹ ԲԱՆԿ» ՓԲԸ

ՆՊԱՏԱԿԸ

«Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող աճուրդների ընթացակարգ»-ի (այսուհետ՝ Ընթացակարգ) նպատակն է կարգավորել «Ֆասթ Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպվող աճուրդների հետ կապված հարաբերություն-ները:

ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Սույն ընթացակարգով սահմանված նորմերը տարածվում են բոլոր տեսակի ֆիզիկական, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վրա, որոնք օրենքով սահմանված կարգով կարող են մասնակցել էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող աճուրդներին:

ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենք	
ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք	
Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի քաղաքականություն	POL 10
Աճուրդի կենտրոնի կանոնակարգ	REG 19
Աճուրդի արդյունքների մասին արձանագրություն (ֆիզիկական անձանց համար)	eFO 96-04-01
Աճուրդի արդյունքների մասին արձանագրություն (իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկա-տերերի համար)	eFO 96-04-02
Հանձնման-ընդունման ակտ (ֆիզիկական անձանց համար)	eFO 96-04-03
Հանձնման-ընդունման ակտ (իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար)	eFO 96-04-04
Առուվաճառքի պայմանագիր (ֆիզիկական անձանց համար)	eFO 95-00-72
Առուվաճառքի պայմանագիր (իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար)	eFO 95-00-73

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկություններ (այսուհետ՝ Աճուրդ)՝ Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող են համարվում այն սակարկու-թյունները, որոնք իրականացվում են էլեկտրոնային եղանակով և համապատասխանում են «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով էլեկտրոնային սակարկություններին ներկայացվող նվազագույն պահանջներին, բացառությամբ հարկադիր էլեկտրոնային աճուրդների.

Էլեկտրոնային համակարգեր՝ էլեկտրոնային համակարգեր են համարվում սակարկություն-ների կազմակերպման համար անհրաժեշտ ծրագրային ապահովումները, ինտերնետային հասցեն, տեխնիկական լուծումները և բոլոր այն համակարգերն ու միջոցները, որոնք անհրաժեշտ են էլեկտրոնային սակարկությունների կազմակերպման, իրականացման և ավտոմատ եղանակով հաղթողին որոշելու համար.

Էլեկտրոնային աճուրդ՝ էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկու-թյունների ձև, որի ընթացքում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որն առաջարկել է առավել բարձր գին.

Աճուրդի ընթացակարգ՝ Բանկի սահմանած փաստաթուղթ, որում նախատեսվում են օրենսդրությանը համապատասխան կազմակերպչի կողմից սահմանման ենթակա դրույթներ.

Լոտ՝ Էլեկտրոնային աճուրդով վաճառվող ցանկացած շարժական կամ անշարժ գույք կամ գույքային իրավունք, որն ունի համապատասխան նկարագրություն, սույն ընթացակարգով նախատեսված այլ տվյալներ, նաև մեկնարկային գին.

Մեկնարկային գին՝ Լոտի վաճառքի համար նախատեսված գին, որն էլեկտրոնային աճուրդի սկզբում առաջարկվում է աճուրդի մասնակիցներին.

Գնային հայտի ներկայացում (Բիդ)՝ Էլեկտրոնային աճուրդի ընթացքում մասնակցի կողմից կատարված գնային առաջարկ, որի չափը չի կարող պակաս լինել սակարկության կազմակերպչի կողմից նախապես սահմանված նվազագույն հավելման չափից, եթե այլ բան նախատեսված չէ սույն Ընթացակարգով: Աճուրդի մասնակիցը կարող է օգտվել համակարգի կողմից առաջարկվող Ավտոբիդի հնարավորությունից, որի դեպքում վերջինս սահմանում է հայտերի/քայլերի (Bid) առավելագույն գին, որն այնուհետև ավտոմատ կերպով համակարգն առաջարկում է մասնակցի անունից: Ավտոբիդի սկզբունքի կիրառման մանրամասն օրինակը ներկայացված է Կայքի «Օգնություն և ՀՏՀ» բաժնում.

Ավտոբիդ՝ Գնային հայտի ներկայացում (Բիդ), որը համակարգն է ավտոմատ իրականացնում Աճուրդի մասնակցի փոխարեն՝ վերջինիս կողմից տրված հրահանգի համաձայն.

Գնման գին՝ Էլեկտրոնային աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի ներկայացրած վերջին ամենաբարձր գնային հայտ.

Աճուրդի հաղթող՝ մասնակից, որն էլեկտրոնային աճուրդի ամփոփման համար սահմանված ժամկետը լրանալու պահի դրությամբ ներկայացրել է առավելագույն գնային առաջարկ.

Աճուրդի կենտրոն՝ Բանկի առանձին կառուցվածքային միավոր, որի գործունեության սկզբունքներն ու կարգը սահմանված են Աճուրդի կենտրոնի կանոնակարգով՝ REG 19.

Աճուրդի մասնակցության վճար՝ գումար, որը սառեցվում է մասնակցից աճուրդի կազմակերպչի կողմից աճուրդին մասնակցելու դիմաց:

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող աճուրդների միջոցով Բանկը հնարավորություն է ստանում գրավի առարկա հանդիսացող կամ սեփականության իրավունքով իրեն պատկանող ցանկացած տեսակի շարժական կամ անշարժ գույք իրացնել, իսկ ֆիզիկական և իրավաբանական անձինք հնարավորություն են ստանում նշված գույքերը ձեռք բերել ավելի արագ և պարզ ընթացակարգերով:

1.2. Աճուրդին ներկայացվող գրավի առարկաների ընտրության, մեկնարկային գնի սահմանման և այլ գործընթացներ կարգավորվում են Աճուրդի կենտրոնի կանոնակարգով՝ REG 19:

1.3. Բանկի էլեկտրոնային աճուրդների իրականացումն ապահովող համակարգ է հանդիսանում www.fcachurd.am / www.fcauction.am / www.fastachurd.am կայքը (այսուհետ՝ Կայք):

1.4. էլեկտրոնային համակարգի միջոցով իրականացվող աճուրդները կարող են տեղի ունենալ ամեն օր, սակայն ոսկյա զարդերի տրամադրումն Աճուրդում հաղթած մասնակիցներին իրականացվում է երկուշաբթիից ուրբաթ օրերին, ժամը 09:00-ից 18:00-ն:

1.5. Աճուրդի մասնակցել ցանկացող անձանց գրանցումը Կայքում կատարվում է անվճար:

1.6. Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական և իրավաբանական անձինք, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիություն ունեցող անձինք, բացառությամբ Բանկի հիմնադիր (մասնակից) և աշխատակից հանդիսացող անձանց:

1.7. Աճուրդի անցկացման տեխնիկական նկարագիրը ներկայացված է Կայքում:

1.8. Աճուրդն անցկացվում է Լոտի մեկնարկային գնի բարձրացմամբ:

1.9. Աճուրդի անցկացման օրը և ժամը հրապարակվում է Կայքի «Առաջիկա աճուրդներ» բաժնում՝ Աճուրդի անցկացումից առնվազն **երկու** օր առաջ: Սույն կետում նշված գործառույթի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Աճուրդի կենտրոնը:

1.10. Աճուրդը տևում է մինչև տվյալ Աճուրդում ներառված վերջին Լոտի վերջին քայլը (Bid): Ընդ որում՝ քայլի (Bid) նվազագույն չափը **1000** կամ **5000** ՀՀ դրամ է: Այն կախված կլինի աճուրդում ներկայացված լոտերի գումարային մեծությունից:

1.11. Բանկը երաշխավորում է աճուրդի մասնակիցների անձնական տվյալների պաշտպանությունը: Աճուրդի մասնակիցների անձնական տվյալները չեն կարող տրվել երրորդ անձանց, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

1.12. Աճուրդը համարվում է չկայացած, եթե աճուրդին չի մասնակցել ոչ մի գնորդ, կամ ի հայտ է եկել ծրագրային խափանումներ և տեխնիկական խնդիրներ: Ընդ որում՝ Աճուրդը կարող է Աճուրդի կենտրոնի ղեկավարի կողմից համարվել չկայացած՝ ծրագրային խափանումների և տեխնիկական խնդիրների դեպքում, որոնք առաջացել են Աճուրդի անցկացման ընթացքում:

1.13. Աճուրդը չկայացած է հայտարարվում նշված հանգամանքների ի հայտ գալու հաջորդ օրվանից ոչ ուշ, որի մասին հրապարակվում է Կայքի Նորություններ բաժնում: Սույն կետով նշված գործառույթի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Աճուրդի կենտրոնի կողմից:

1.14. Չկայացված Աճուրդների մասնակիցների Մասնակցության վճարը (առկայության դեպքում) ապասառեցվում են **երեք** աշխատանքային օրվա ընթացքում:

1.15. Աճուրդն անվավեր կարող է ճանաչվել նաև շահագրգիռ անձի հայցով՝ դատական կարգով:

1.16. Աճուրդն անվավեր ճանաչվելու դեպքում կազմակերպվում է նոր աճուրդ:

1.17. Աճուրդին մասնակցելու համար օգտատիրոջ՝ Կայքում կցված բանկային քարտից կարող է սառեցվել Մասնակցության վճար, որի չափը սահմանվում է սույն ընթացակարգի 1.21 և 1.22 կետերով և հրապարակվում էլեկտրոնային աճուրդի կայքում (www.fcachurd.am / www.fcauction.am / www.fastachurd.am):

1.18. Յուրաքանչյուր աճուրդում ներկայացված լոտերի դիմաց սառեցվում է առանձին Մասնակցության վճար, որի չափը կախված կլինի այն Լոտերի վերջնական ընտրությունից, որոնց աճուրդին ցանկանում է մասնակիցը մասնակցել:

1.19. Հաղթած լոտերի վճարման ժամանակ կիրառվում է փոխհաշվարկ: Վերջնական ձեռքբերվող լոտերի հանրագումարային արժեքից նվազեցվում է կատարված Աճուրդի մասնակցության վճարը, բացառությամբ չվերադարձվող մասի (այդպիսին նախատեսված լինելու դեպքում): Մասնակիցների հաշիվներից սառեցվող, վերադարձվող, վերջնական գանձվող գումարները հաշվարկվում են մեկնարկային գնի նկատմամբ:

1.20. Եթե վերջին **երեք** ամսվա ընթացքում Աճուրդի մասնակիցն ունեցել է **հինգ** անընդմեջ գնում, ապա մասնակիցը կարող է դասակարգվել, որպես հավատարիմ օգտատեր և նրա նկատմամբ Մասնակցության վճար չի կիրառվի, մինչև վերջինիս կողմից հերթական հաղթած Աճուրդում ներառված Լոտերի մասնակի կամ ամբողջական ձեռքբերումից հրաժարվելը, որից հետո Աճուրդի կենտրոնի ղեկավարի որոշմամբ կարող է տեղի ունենալ մասնակցի կարգավիճակի հետդասակարգում:

1.21. Աճուրդում ներկայացված մինչև **300 000** ՀՀ դրամ մեկնարկային գների հանրագումարային լոտերին մասնակցության դեպքում չի կիրառվում Մասնակցության վճար:

1.22. Աճուրդում ներկայացված **300 000** ՀՀ դրամ և ավելի հանրագումարային լոտերի Աճուրդ-

ների պարագայում մասնակցության վճարը սահմանվում է **2%**, որը կիրառվում է **300 000** ՀՀ դրամը գերազանցող մասի վրա:

1.23. Աճուրդի կենտրոնը յուրաքանչյուր աշխատանքային օր էլեկտրոնային աճուրդով վաճառքների վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Ներքին հաշվապահության ծառայություն: Հաշվետվությունն իր մեջ ներառում է վաճառքի գումարներ, հետ չվերադարձվող մասնակցության վճարների, հաշվանցված մասնակցության վճարների և Աճուրդի մասնակիցներին վերադարձված մասնակցության վճարների վերաբերյալ տեղեկատվություն: Հաշվետվության հիման վրա Ներքին հաշվապահության ծառայությունն իրականացնում է համապատասխան հաշվապահական ձևակերպումները:

1.24. Ընթացակարգի 1.12 և 1.15 կետերով նախատեսված դեպքերում, ինչպես նաև Աճուրդում որևէ լոտ չհաղթելու կամ հաղթելու դեպքում մինչև **300 000** ՀՀ դրամ հանրագումարային լոտ(եր)ից հրաժարվելու պարագայում Մասնակցության վճարը ապասառեցվում է **երեք** աշխատանքային օրվա ընթացում: Ընդ որում՝ Ընթացակարգի 4.12 և 4.15 կետերում նշված դեպքերում գործարքը չկայանալիս ոչ միայն վերադարձվում է գնված լոտի գինն ամբողջությամբ, այլ նաև ապասառեցվում է Մասնակցության վճարը (առկայության դեպքում) **երեք** աշխատանքային օրվա ընթացքում:

1.25. Ստորև ներկայացված Գործարքի չեղարկման դեպքերում Մասնակցության վճարը (առկայության դեպքում) չի վերադարձվում, բացառությամբ մինչև **300 000** ՀՀ դրամ հանրագումարային Լոտ(եր)ից հրաժարվելու դեպքերը՝

1) Աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը՝ eFO 96-04-01 կամ eFO 96-04-02, չստորագրելու դեպքում,

2) ստորագրելուց (հաստատելուց) հետո **երեք** աշխատանքային օրվա ընթացում հաղթած լոտի գինն ամբողջությամբ չվճարելու դեպքում,

3) Հաղթած լոտի գինն ամբողջությամբ վճարելուց հետո եռօրյա ժամկետում Առուվաճառքի պայմանագիրը՝ eFO 95-00-72 կամ eFO 95-00-73 չստորագրելու դեպքում,

4) Առուվաճառքի պայմանագիրը՝ eFO 95-00-72 կամ eFO 95-00-73, և Հանձնման-ընդունման ակտը՝ eFO 96-04-03 կամ eFO 96-04-04, չստորագրելու դեպքերում,

Սույն կետի 1-ից 4-րդ ենթակետերում նշվածները չեն վերաբերվում Ընթացակարգի 4.12 և 4.15 կետերով նախատեսված դեպքերին:

ԳԼՈՒԽ 2. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԱՃՈՒՐԴՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՐԱՆՑՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

2.1. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող աճուրդներին մասնակցելու նպատակով անձը պետք է մուտք գործի Կայք և գրանցվի համապատասխան պատուհանի միջոցով, ընդ որում գրանցման համար պարտադիր են ներքոնշյալ տվյալների և փաստաթղթերի տրամադրումը.

ա. անուն, ազգանուն և հայրանուն (Իրավաբանական անձանց դեպքում ֆիրմային անվանումը),

բ. ծննդյան օր, ամիս և տարեթիվ (Իրավաբանական անձանց դեպքում Գրանցման ամսաթիվը),

գ. ծննդյան վայրը (Իրավաբանական անձանց դեպքում ֆիրմայի գտնվելու վայրը),

դ. հաշվառման հասցեն (առկայության դեպքում),

ե. բջջային հեռախոսահամար,

զ. էլեկտրոնային փոստի հասցե,

է. անձնագրի սերիան, համարը, տրամադրող մարմնի համարը, տրման ամսաթիվը, (Իրավաբանական անձանց դեպքում գրանցման համարը, ՀՎՀՀ-ն),

ը. անձնագրի լուսապատճեն (Իրավաբանական անձանց դեպքում պետական գրանցման վկայականի),

թ. իրավաբանական անձանց դեպքում նաև տնօրենի կամ վերջինիս պարտականությունները կատարող անձի անձնագրի լուսապատճեն, կամ վերջիններիս կողմից լիազորված ներկայացուցչի լիազորագրի էլեկտրոնային եղանակով ստորագրված լիազորագիրը, անձը հաստատող փաստաթուղթը,

ժ. իրավաբանական անձանց դեպքում գործունեության իրականացման վայրը, եթե տարբերվում է իրավաբանական անձի գտնվելու վայրից,

ժա. իրավաբանական անձանց դեպքում կանոնադրությունը կամ համանման այլ փաստաթուղթ,

ժբ. բանկային քարտի կցում:

2.2. Տվյալները մուտքագրելուց և Կայքում գրանցվելուց հետո գեներացվում է նույնականացնող համարանիշ (ID), որով մասնակիցը հնարավորություն է ստանում մասնակցել Էլեկտրոնային աճուրդի:

2.3. Կայքում գրանցված մասնակցի նույնականացումն իրականացվում է Բանկում գործող Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի քաղաքականության՝ POL 10, համաձայն:

ԳԼՈՒԽ 3. ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

3.1. Սպասվելիք Աճուրդի անցկացման մասին հրապարակային ծանուցումը տեղադրվում է Բանկի պաշտոնական կայքէջում (fastbank.am) և Կայքում՝ Աճուրդն անցկացնելու օրվանից առնվազն **երկու** օր առաջ:

3.2. Բանկի աճուրդի կենտրոնը կազմակերպում և հետևում է, որպեսզի Բանկի պաշտոնական կայքէջում և Կայքում նշված ժամանակահատվածում տեղադրվի Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը:

3.3. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը ներառում է.

1) աճուրդի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը,
2) Բանկի անվանումը,
3) աճուրդի ձևը և անցկացման կարգը,
4) աճուրդի պայմանները, այդ թվում՝ Լոտի (Լոտերի) անվանումը, Լոտի նկատմամբ սահմանափակումները, Լոտի ֆիզիկական վիճակը (մաշվածությունը) և/կամ արտադրման տարեթիվը, Լոտի մեկնարկային գինը, լոտի իրավունք լինելու դեպքում՝ այդ իրավունքի գործողության ժամկետը, ինչպես նաև էական այլ պայմաններ,
5) աճուրդին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,
6) աճուրդում հաղթողին որոշելու կարգը,
7) կազմակերպչի կողմից սահմանված Մասնակցության վճարի չափը, ինչպես նաև վճարման կարգը և ժամկետները,
8) ընդհանուր աճուրդի դեպքում՝ Լոտերի վաճառքի հերթականությունը:

3.4. Բանկի կողմից տրամադրված վարկերի ապահովման միջոց հանդիսացող և իրացման ենթակա գույքի աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է պարտադիր ներառի լուսանկարներ:

ԳԼՈՒԽ 4. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԱՃՈՒՐԴԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4.1. Աճուրդի կայքում ցուցադրվում են հերթական համարներով Աճուրդներ, որոնք իրենց մեջ

ներառում են բազմաթիվ Լոտեր: Մասնակիցն իր ցանկությամբ հնարավորություն ունի գրանցվելու ամբողջական Աճուրդին կամ Աճուրդում ներկայացված Լոտերից մեկի կամ մի քանի Լոտերի Աճուրդներին:

4.2. Մասնակիցը հնարավորություն է ստանում մասնակցելու ընտրված լոտերի Աճուրդներին միայն համապատասխան մասնակցության վճարի գումարի սառեցումից հետո, եթե այդպիսին նախատեսված է սույն ընթացակարգով:

4.3. Մասնակցության վճարները սառեցվում են օգտատիրոջ հաշվին կցված քարտից և ապասառեցվում նույն քարտին:

4.4. Եթե առկա է հաճախորդին վերադարձման (ապասառեցման) ենթակա գումար, ապա այն վերադարձվում է հաճախորդին (ապասառեցվում է) Աճուրդն ավարտվելուց և/կամ Ընթացակարգի 1.24 կետով սահմանված հանգամանքների ի հայտ գալուց հետո **երեք** աշխատանքային օրվա ընթացքում:

4.5. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող աճուրդներին մասնակցելու նպատակով Կայքում գրանցված մասնակիցը մինչև Աճուրդի նախորդ օրը՝ ժամը 16:00-ն ներկայացնում է Աճուրդին մասնակցության հայտ՝ Կայքում համապատասխան պատուհանի միջոցով: Հայտը ներկայացվում է յուրաքանչյուր աճուրդի համար:

4.6. Մինչև տվյալ Լոտի աճուրդի ավարտը մասնակիցն ինքն է կատարում հերթական գնային առաջարկները: Աճուրդում հաղթող է ճանաչվում ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը: Աճուրդի հաղթողը որոշվում է ավտոմատ համակարգի միջոցով:

4.7. Աճուրդը հաղթած օգտատիրոջ անձնական հաշվում ավտոմատ գեներացվում է Աճուրդի արդյունքների մասին արձանագրություն՝ eFO 96-04-01, փաստաթուղթը, որն Աճուրդի անցկացման օրը հաստատելուց հետո համարվում է ստորագրված: Արձանագրությունը հաստատելուց (ստորագրելուց) հետո Աճուրդում հաղթած մասնակիցը **երեք** աշխատանքային օրվա ընթացքում վճարում է գնված Լոտի գինն ամբողջությամբ, իսկ Մասնակցության վճարը (առկայության պարագայում) հաշվանցվում է համաձայն սույն ընթացակարգի 1.19 կետի: Օգտատիրոջ անձնական հաշվում առկա վճարման կոճակով օգտատերը Կայքին կցված բանկային քարտով կամ այլ քարտով կկարողանա վճարել հաղթած և արձանագրությունով հաստատված Լոտերի դիմաց:

4.8. Օգտատիրոջ ցանկությամբ արձանագրությունով հաստատված Լոտերի դիմաց վճարումը կարող է կատարվել բանկային փոխանցման միջոցով՝ նշելով արձանագրության համարը և հաղթած մասնակցի անուն/ազգանունը:

4.9. Հաղթած Լոտ(եր)ի գինն ամբողջական Աճուրդի կազմակերպչի կողմից ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում Աճուրդում հաղթած մասնակցի հետ կնքվում է Առուվաճառքի պայմանագիր՝ eFO 95-00-72 կամ eFO 95-00-73:

4.10. Մինչև **300 000** ՀՀ դրամ հանրագումարային հաղթած Լոտերի Առուվաճառքի պայմանագիրը՝ eFO 95-00-72 կամ eFO 95-00-73, գեներացվում է օգտատիրոջ անձնական հաշվում, որը առցանց տարբերակով հաստատվում է (ստորագրվում է) օգտատիրոջ կողմից: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448 հոդվածի, 450 հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, ինչպես նաև 454 հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, Առուվաճառքի պայմանագիրը համարվում է ստորագրված/կնքված օգտատիրոջ հաշվում գեներացված պայմանագրի համապատասխան վայրում հաստատման կոճակը սեղմելուց հետո:

4.11. Հաղթած լոտերի հանրագումարային արժեքը **300 000** ՀՀ դրամ և ավելի կազմելու դեպքում Առուվաճառքի պայմանագիրը՝ eFO 95-00-72 կամ eFO 95-00-73, կնքվում է Բանկի տարածքում: Մինչև գույքի Առուվաճառքի պայմանագրի կազմումը Աճուրդի կենտրոնի աշխատակիցը նույնականացնում է Աճուրդը հաղթած մասնակցին, համեմատում է Կայքում գրանցված օգտատիրոջ տվյալների հետ և անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում տեղեկացնում Աճուրդի կենտրոնի ղեկավարին:

4.12. Օգտատիրոջ տվյալներում հայտնաբերված անհամապատասխանությունները տեխնիկական բնույթի լինելու դեպքում Աճուրդի կենտրոնի ղեկավարը և/կամ նրա կողմից իրավասություն ստացած աշխատակիցը Կայքում խմբագրում է օգտատիրոջ տվյալները: Այն դեպքերում, երբ անհամապատասխանությունները կասկածներ են հարուցում Աճուրդը հաղթած մասնակցի ինքնության վերաբերյալ, ապա գույքի Առուվաճառքի պայմանագիր չի կնքվում:

4.13. Աճուրդում հաղթած մասնակցի հետ գույքի Առուվաճառքի պայմանագիրը eFO 95-00-72 կամ eFO 95-00-73, կնքելուց հետո՝ **երեք** աշխատանքային օրվա ընթացքում, երկկողմանի (Աճուրդի կենտրոնի ղեկավարի և Աճուրդի հաղթողի կողմից) ստորագրված հանձնման-ընդունման ակտի՝ eFO 96-04-03 հիման վրա իրականացնում է գույքի հանձնում:

4.14. Մինչև հանձնման-ընդունման ակտը ստորագրելը, Աճուրդը հաղթած մասնակիցը պարտավոր է ուսումնասիրել հաղթած Լոտը:

4.15. Եթե Աճուրդում ներկայացված լոտ(երը) չեն համապատասխանում փաստացի նկարագրի հետ (հարգ, քաշ, տեսք և այլն), ապա հաճախորդի դիմումի հիման վրա և Աճուրդի կենտրոնի ղեկավարի որոշմամբ դրանց մասով իրականացված Աճուրդները կարող են չեղարկվել, իսկ կիրառված մասնակցության վճարները կվերադարձվեն մասնակիցներին:

4.16. Վերջին **մեկ** ամսվա ընթացքում **երեք** անգամ Աճուրդում հաղթող, սակայն սահմանված ժամկետներում աճուրդի արձանագրությունը չհաստատած (մասնակի կամ ամբողջական), Առուվաճառքի պայմանագիրը չկնքած և/կամ գույքը ձեռք չբերած (հանձնման-ընդունման ակտի հիման վրա) օգտատիրոջ հաշիվը (account) մինչև **երեք** ամսով կարող է արգելափակվել:

4.17. Այն դեպքում, երբ հաղթած մասնակցի մեկանգամյա գնման գործարքի մեծությունը գերազանցում է 3 000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամը, իսկ տվյալ ամսվա ընթացքում՝ 10 000 000 (տասը միլիոն) ՀՀ դրամը, ապա մասնակիցը պետք է Բանկի ԱԲՀ-ում գրանցվի որպես հաճախորդ:

ԳԼՈՒԽ 5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Սույն Ընթացակարգը հանդիսանում է «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 4.1 գլխով պահանջվող էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող աճուրդի ներքին իրավական ակտը:

5.2. Աճուրդի մասնակիցների բողոք-պահանջների դիտարկման և գումարների փոխհատուցման գործընթացները ներկայացված են Կայքի համապատասխան բաժնում:

ԳԼՈՒԽ 6. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Սույն ընթացակարգի տիրապետող է հանդիսանում Բանկի աճուրդի կենտրոնը:

6.2. Սույն ընթացակարգն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հուլիսի 1-ից: Ընթացակարգի 1.22 կետով նախատեսված դրույթի պահանջները տարածվում են 2024 թվականի հուլիսի 1-ից հետո բռնագանձված զարդերի վրա:

6.3. Սույն ընթացակարգն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած է ճանաչվում «Ֆասթ Բանկ» ՓԲԸ տնօրինության 2024 թվականի հունվարի 23-ի թիվ DEC 12-4 արձանագրությամբ հաստատված Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող աճուրդների ընթացակարգը՝ PRC 96-04#1:

ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ	ՀԱՍՏԱՏԵՑ
Աճուրդի կենտրոնի ղեկավար	**Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահ**
	31.05.2024թ.
Արտավազդ Թառոյան	**Գարեգին Դարբինյան**

ՏԻՐԱՊԵՏՈՂ
Աճուրդի կենտրոնի ղեկավար
Արտավազդ Թառոյան